Դանիել Վարուժան

Արևելյան բաղնիք

Մորճագրմբեթ բաղանիքին ներքնադուռն հո՜ւյլ կը բացվի,
Եբենոս դո՛ւռն հաստաբեստ՝ որ կը ծեծվի միշտ թակով,
Եվ անընդհատ կը քրրտնի, կը ճրողնչե ուժասպառ
Հուրիներուն ետևեն՝ որոնք դանդա՜ղ կը մըտնեն:
Բոլոր մե՛րկ են ու չրքնա՛ղ, – թևերն իրենց ծալլեր են
Լանջքերուն վրա հոյաշեն՝ որոնց վրա կրդիզվին
Կույտերն րենց ծիծերուն, պըտուկներով թրխագեղ:
Սատափազօծ սանդալներն հատակին վրա կը հընչեն.
Սրտերուն հևքն աղվական, ձայներն իրենց քաղցրանույշ
Բաղնիքեն ներս կը փոխվին անդրընդասույզ ղողանջի.
Աստղերուն պես՝ լողացող մառախուղին մեջ աղոտ՝
Իրենց աչքերը խոնավ նըշողյուններ կ'արձակեն,
Եվ գոլորշին, իր տամուկ շըղարշներով, կը պատե
Մարմինն իրենց՝ որ պըտղիլ կը սկըսի ա՛լ քրտինքով:
Հուրիները կը լոգնա՜ն. Պորտաքարին կիզանուտ
Ոմանք պառկած նըվաղկոտ նայվածքներով կ'երազեն:
Լուսացընցուղ գըմբեթեն՝ արևուն շողը ճերմակ
Ներս կը մաղվի՝ մարգարտյա հորդ անձրևի մը նըման.
Եվ ծփանուտ գոլորշին կը դառնա ծով մ'արծաթյա,
Ուր լյուղ կու գան կարապներն Արևելքի Հեշտանքին
Ըսպածանին՝ որ կըպած է գիստերնուն լոռի պես,
Ա՛լ կը նետվի. մարմինները կը փոխվին արձանի.
Եվ մազերնին, հյուս առ հյուս, ծովերու պես կը քակեն,

Ուրկե երբե՛մն կ'իյնան գոհարներու հատիկներ,
Օ՛, ծամե՛րն այդ, ծամե՛րն այդ, որոնցմով ա՛լ կը ծփա
Կարծես բաղնիքը ամբողջ. և պորտաքարը մարմար
Կը թրխանա անոնց հորդ սևափրրփուր ալիքով:
Գլուխն իրենց կը սանտրեն ոսկեդրվագ սանտրերով
Երկա՛ր, երկա՛ր, մինչև ծայրն անծայրածիր մազերուն
Կ'երթան իրենց մատվրները ծեքծեքուն ու դանդաղ
Միշտ լողալով կայծերուն մեջ մատնիի ադամանդ:
Անոնք երբեմրն կը զգան նրվաղումներ, ու երբեմն
Հանկարծակի կը սարսռան՝ երբ գմբեթեն կը կաթի
Ցուրտ ցող մ'իրենց ծոծրակին հեշտագրգիռ փոսին մեջ:
Ահա հարյուր ծորակնե՛րն, ահա մարմար ծորակնե՛րն
Իրար ետև կը բացվին՝ աղմրկահույզ կարկաջով.
Մոխիրի պես գորշ շոգին կը բարձրանա ծուփ առ ծուփ,
Դատարկ գուռերը բոլոր կենդանություն կը ստանան.
Ջուրը կ'հորդի ամեն կողմ, ջուրը կ'երգե քաղցրահունչ.
Հուրիները կը լոգնա՛ն. Գուռերուն շուրջ հավաքված
Գանո՛վայի Շրնորհներ, կարծես իրար կը փարին,
Եվ կը խառնեն ծիծերնին, կը խառնեն ժիր թևերնին
Եվ սրրունքնին պաղպաջուն, և պորտերնին կոշարա՝
Ուրկե մուշկի հատիկներ, տարրալուծված, կը բուրեն:
Մարմարներուն վրա նստած զիստերն իրենց կ'ընդլայնին՝
Ու կը խրմեն հեշտությունն իրենց տակեն սահող ջրին:
Ոսկի թասերը ահա քարերուն վրա կը հընչեն,
Տոսա՛խ թասերն, որոնք մերթ սիրտերու պես կը ճաթին՝
Այդ անպատում մերկությանց ծառայելու ժամանակ:
Կը քրրքրրի կավն ահա, ծոթրինաբույր կավը զով,
Ծաղկահյութով զանգրված՝ զոր մեր նախնիք կ'ուտեին:
Մազերն անով կը ծեփվին, ու կը դառնան ապրրշում:
Լանջերն անով կ'օծանվին, ու կ'ըլլան նման փրփուրի.
Անոր խյուսովը պաղուկ, և լրպրրծուն շաղախով
Կը զովանան հուրիներն, որովայننին կը հրդկեն
Գետի խիճին պես ողորկ ու թավշորեն օծանուտ:

Կ'եռան ջուրերը, կը լվան Կըրակներն այդ պաշտելի.
Կը փըրփըրին օճառներն՝ Մաքրություններն անգամ մ'ալ
Իրենց մածան լույսերուն մեջ մաքրելու ի խընդիր,
Ջուրն, որ ամեն կողմանե, պորտաքարին շուրջն ի վար,
Կ'հոսի կ'երթա՝ կոյուղին իսկ բուրումով լեցնելու,
Գո՜րշ է կավով ու կիրով, լեղի կիրով հերաթափ,
Եվ իր ուղխին հետ մեկտեղ մերթ կը գըլե կը տանի
Թըխակուտակ թընճուկներ, անութներու գանգուրներ,
Եվ խըռիվներն աղվամազ այդ կիպերյան լուսեղեն
Արձաններուն կենեղուտ՝ որոնք այլևս ուժաթափ
Կը լեցընեն հուսկ թասերն, թասերը հուսկ կը պարպես.
Գուռերն հե՛ղ մ'ալ կը հորդին, բաղնիքն հեղ մ'ալ կ'աղմկի
Ջուրն եռեփուն կը վազե, հե՛ղ մ'ալ կ'լողնան հուրիներն:
Կը բըռնըկի մորթերնին վարդի մը պես բոցավառ.
Եվ նըվաղուն բիբերով, թասերն՝ իրենց գըլուխին,
Կուրծքերնուն վրա միշտ գրկած դեզերն րենց ծիծերուն՝
Այլևըս դուրս կը փութան, շարան շարան, հևասպառ,
Անգայտացած շոգիով, կակաչներու պես բոսոր…
Օ՜, գանգուրներն հորդառատ՝ իրենց կուրծքին վրա մերկ,
Օ՜, գանգուրները խըխում, կաթիլնեով ծանրացած,
Որոնք բոբիկ ոտքերնուն՝ սատափ ցողեր կը ծորեն…
Ինչպես պատմել ձեր օծումն, ի՜նչպես պատմել ձեր զարդերն՝
Երբ մարմիննիդ կը սըրբեք, և կուռքի պես կը հագվիք…
Թող համբուրեմ մատերնիդ՝ զոր դուք այսօր կը թաթխեք
Հինաներու գուշին խորն՝ իբր արյունոտ սըրտի մեջ,
Թող համբուրեմ մազերնիդ՝ կընդրուկներով օծանուտ՝
Որոնք, գիշերը, լուսնին տակ, կը բուրեն բարձին վրա,
Եվ հոնքերնիդ ծարուրված, ամպանըման թարթիչնիդ,
Եվ լա՜նջքը ձեր՝ որ փաղփուն մանյակներով ոսկեշար
Ամուսնական անկողնին նըշողուն ջա՛հը կ'ըլլա.
Թող համբուրեմ պորտը ձեր՝ ուր ծըրարած կը ծածկեք
Թե՛ Արաբիո հաշիշներն և թե՛ մուշկերն Ափրիկյան:
Ձեր տուներն այժը՛մ կ'երթաք գահարներով բեռնավոր…

Թող սալարկները Քաղքին ձեր քայլերեն թարմանան…
Յուրտը խածնե թուշերնիդ, ու այտերնիդ բոսորե:
Վարշամակեն ձեր տամուկ, քրղանցքներեն ծրփծրփուն
Արտաբուրե՛ և հորդի՛ լոգանքին հոտը ծոթրին.
Եվ լեցրնե գրոեհներն, հրրապարա՜կն և ուղի՜ն.
Ավելցած մասն այն հացին՝ զոր դուք բաղնիք կը տանիք,
Զոր թասին մեջ կը դրնեք և կը ծածկեք ղենջակով,
Թող արձակե՛ բուրումն իր՝տարաշխարհիկ համեմով,
Զի այն ատեն փողոցներն Արևելյան Քաղաքին
Պիտի ըզգան թե Մայիսն հետքերնուդ վրա կը ծաղկի,
Եվ թարմացած մայթերեն Գարո՜ւն, Գարո՜ւնը կ'անցնի: